ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետի
գիտական խուրհրդի 18.09.19թ. կայացած թիվ 2.19-20 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 36 անդամներից 24-ը:

Նիստը վարեց ֆիզիկայի ֆակուլտետի դեկան, պրոֆ. Ռ. Հակոբյանը:

Հաստատվեց հետևյալ օրակարգը՝

1. Առկա ուսուցմամբ ասպիրանտների թեմաների և ղեկավարների հաստատում:
2. Անվանական կրթաթոշակների նշանակում:
3. Ընթացիկ հարցեր:

Լսեցին՝ Առկա ուսուցմամբ ասպիրանտների թեմաների և ղեկավարների հաստատում:

Ելույթ ունեցավ միջուկային ֆիզիկայի ամբիոնի վարիչ Ա.Ռ. Բալաբեկյանը: Նա ներկայացրեց միջուկային ֆիզիկայի ամբիոնի առկա ուսուցման 1-ին տարվա ասպիրանտ Սարգիս Ֆալթաջանյանի գիտական թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը: Բալաբեկյանը ներկայացրեց առաջակվող թեման, նշեց, որ այն արդիական է, ինչպես նաև ունի գիտական ու կիրառական նշանակություն:

Որոշեցին՝ Հաստատել ուսումնառության 1-ին տարվա հեռակա ասպիրանտ Սարգիս Ֆալթաջանյանի հետևյալ թեման՝ <<Ֆոտոմիջուկային ռեակցիաների ուսումնասիրությունը ֆոտոնների առավելագույն էներգիայի մինչև 70 ՄէՎ տիրույթում>>:

Գիտական ղեկավար նշանակել ֆիզ.-մաթ. գիտությունների դոկտոր, դոցենտ Ա.Ռ. Բալաբեկյանին:

Ելույթ ունեցավ տեսական ֆիզիկայի ամբիոնի վարիչ Ա.Ա. Սահարյանը: Նա ներկայացրեց տեսական ֆիզիկայի ամբիոնի առկա ուսուցման 1-ին տարվա ասպիրանտ Տիգրան Արայի Պետրոսյանի գիտական թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

Որոշեցին՝ Հաստատել ուսումնառության 1-ին տարվա հեռակա ասպիրանտ Տիգրան Արայի Պետրոսյանի հետևյալ թեման՝ << Որոշ քվանտային երևույթներ կոսմոլոգիական մոդելներում >>:

Գիտական ղեկավար նշանակել ֆիզ.-մաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամ Ազատի Սահարյանին:

Լսեցին՝ անվանական կրթաթոշակներ հատկացնելու հարցը:

Ելույթ ունեցավ ֆիզիկայի ֆակուլտետի գիտքարտուղար Շ. Ա. Տոնոյանը: Նա ներկայացրեց անվանական կրթաթոշակի հավակնող ուսանողներին, ինչպես նաև անվանական կրթաթոշակի տրամադրման չափանիշները:

Որոշեցին՝ անվանական կրթաթոշակ հատկացնել ֆիզիկայի ֆակուլտետի ներքոհիշյան ուսանողներին.

ԵՊՀ կրթաթոշակ

1. Հարությունյան Մերի Լևոնի -ֆիզ.ֆակ. բակալավրիատի 3-րդ կուրս

Գուրգեն Սահակյանի անվան կրթաթոշակ

1. Ասատրյան Մարգարիտ Գառնիկի -ֆիզ.ֆակ. բակալավրիատի 4-րդ կուրս

Ալիխանյան եղբայրների անվան կրթաթոշակ

1. Ասլանյան Դավիթ Հարությունի -ֆիզ.ֆակ. բակալավրիատի 4-րդ կուրս

Վիկտոր Համբարձումյանի անվան կրթաթոշակ

1. Չիթչյան Սոնա Սամվելի -ֆիզ.ֆակ. բակալավրիատի 4-րդ կուրս
2. Ասատրյան Հրաչյա Հայկի -ֆիզ.ֆակ. բակալավրիատի 3-րդ կուրս

Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան՝ Ռ.Ս. Հակոբյան

Խորհրդի քարտուղար՝ Շ.Ա. Տոնոյան